## 74. ԼՈՒՍԱՎՈՐ ՄՈՐԹ

Մըսրա քաղաք պառավըմ կեր, ուր տըղեն:

Տըղեն մեկ օր մոր էսաց. - Մարե՛, իմ խոր գուրծ փեշեն ինչ էր:

Մեր էսաց. - Քու խոր գուրծ ավճութին էր:

Տըղեն էլավ, թվանկ առըց, գինաց մեշեն, մինչիվ հիրիկուն կան իրի, բանըմ չըգնտավ՝ սպանըր, դարտակ իրի տուն: Առավուտուն էլմ առըց զթվանկ, գինաց: Էլմ մինչիվ հիրիկուն կան իրի, բանըմ ձեռ չընկնավ, էլմ դարձավ, իրի տուն:

Առավուտուն էլավ, զթվանկ առըց, էսաց. - Իս ասօր բան'մ չըզանիմ, իս թու տուն չըմ իգա:

Էրդըվցավ, գինաց:

Մինչիվ հիրիկուն կան իրի, բանըմ չըգնտավ՝ սպանըր, մթնավ:

Հերդըվցի, տուն չէրթա, մնաց ծովու բիրան, զընք իտու հեռջիվ քաղրըն, մնաց ան տե:

Տըսավ լուսըմ ծովեն իլավ, դուս իրի, իրի, մոտացավ տըղըն: Տըղեն էլ իզար, ան ճանավար սպանից, գինաց մուրթից, զմուրթ առըց, իթալ վար թիվին, գինաց տուն, էսաց. «Տանիմ, թըլիմ ան տե, իմ մեր կը նստը վրեն, լուս կըտա, ճախրակ կը մանի, շատ աղեկ բան ի»:

Իթալ վար թիվին, գինաց քաղքը մեջ:

Վուզիր դուռ կանգներ էր, էսաց. - Տըղա՛, ադա մուրթ տո՛ւ ըզծը:

Տըղեն էսաց. - Չըմ իտա, մեք քաՀսիպ մարդ իք, ճրագլուս չունինք: Կը թլիմ ան տե, լուս կըտա, իմ մեր ճախրակ կը մանի:

Ինչ էրավ վուզիր, տըղեն զմուրթ չէտու, առըց գինաց:

Գինաց դՀուռ. - Մարե՛, դՀ՛ուռ բաց, իս էկա:

Էսաց. - Կանգնը՛, ճրագ կպուցիմ, դՀուռ բանամ:

Էսաց. - Մարե՛, ճրագ մը՛ էնը, իմ խիտ ճրագ կա:

ԴՀուռ իբաց, մեր ինչ զմուրթ տիսավ, ուրախացավ:

- Ադ ի՞նչ բան է, - էսաց:

Առըն, գաՀցըն տուն, տուն քաՀն զցերեկ շատ լուսացավ:

Մերն էսաց. - Վուրդը՛, ան ինչ մուրթն դՀու բիրըր, քաՀղքը մեջ զքի մարդ չըտիսա՞վ:

- Մարե՛, վուզիր զձը տիսավ:

- Բանըմ չըսա՞ց քի:

- Էսաց՝ մուրթ տո՛ւ ըզձը, իս չըտվը:

Մեր էսաց. - Վուրդը՛, ան զքի չարըմ տ'էցքը:

Առավուտուն վուզիր իլավ, գինաց թագՀավուրը մոտ, էսաց. - ԹագՀավո՛ւր ապրած կինաս, մեկ փուսքըմ պառվու տըղեն բիրի, ան քի կը վայելե, բիրիս, թըլիս դիվանխանեն, գըշիր-ցիրեկ լուս տա:

ԹագՀավուրն էլ խրկից հիտիվ պառվու տըղըն, ադ մարդ պառվու տըղըն էսաց. - ԹագՀավուր զքի կուզը:

Էսաց. - ԹագՀավուր ի՞նչ գուրծ ունը իմ խիտ:

Էսաց. - Իս չըմ գտի, կըսը՝ պառվու տըղըն թը գՀ:

Պառվու տըղեն էլավ, գինաց թագՀավուրը մոտ:

Էսաց. - ԹագՀավո՛ւր ապրած կինաս, ընչի՞ ըզձը կանչիր իս:

Էսաց. - Հիրիկուն դՀու ի՞նչ իս բիրի քաՀղքը մեջ:

Էսաց. - Իս բան'մ չըմ բիրի, մեկ մուրթ մ'իմ բիրի, թըլիր ըմ տուն, իմ մեր նստը վրեն, լուս տա, ճախրակ մանի: Մինք ֆուղարա մարդ ինք, ճրագլուս չըկա:

ԹագՀավուր էսաց. - Կէրթաս, ան մուրթ կը բիրիս՝ բի՛, չըբիրիս, զքՀու վըզ կը զարկիմ:

Տըղեն լալելեն իլավ, գինաց տուն:

Մեր էսաց. - Վուրդը՛, ինչո՞ւ կուլաս:

- ԹագՀավուր կըսե՝ մուրթ չըբիրիս, զքՀու վըզ կը զարկիմ:

Մերն էսաց. - Վուրդը՛, չէ՞ իս քի ըսըցը՝ վուզըր զքի չար'մ տ'ըցգը, վուրդը՛, իլի՛, ա՛ռ տա՛ր, Աստված անՀու պալա տա:

Տըղեն իլավ, զմուրթ առըց, գինաց, իտու թագաւվուրըն, թագաւվուրըն էլ վուզրըն էսաց. - Աղեկ պախշիշ'մ կը տաս պառվու տըղըն:

Վուզիրն իլավ, քսան փարա իտու պառվու տըղը ձեռ:

Պառվու տըղեն գինաց տուն, էսաց պառավ. - Վուրդը՛, պախշիշ'մ չըտվը՞ն քի:

Էսաց. - Մարե՛, թագաւվուր էսաց՝ աղեկ պախշիշ'մ կը տաս, վուզիր քսան փարա իտու:

Էսաց. - Վուրդը՛, Աստված անու պատիճըմ տա, թըլե՛ հականատ, թը կինա ան տե:

Ձքսան փարա իթալ հականատ:

Վուզիր թագաւվուրըն էսաց. - Թագաւվո՛ւր ապրած կինաս, ասա մուրթըն պետք ը ֆըլի ուսկուր բիրին, մեկ սարե'մ շընին, մուրթ դնին մեջ, լուս տա:

Թագաւվուր էսաց. - Վուզի՛ր, ֆըլի ուսկուրը վո՞ւվ տ'էրթա, անցկուն ֆըլի ուսկուր բիրի, իս սարա տամ շընիլ:

Վուզիր էսաց. - Ո՛ր ան մուրթ բիրի, ան կերի բիրի:

Էսաց. - Մարդ ճամբխի՛, պառվու տըղեն թուղ գա՛:

Մարդ ճամբխըցըն պառվու տըղըն իտիվ:

Պառվու տըղեն էլաց:

Մեր ասաց. - Վուրդը՛, ինչո՞ւ կը լաս, Աստված վուզրըն պատիճըմ տա, գինա՛, մը՛ վախընա:

Պառվու տըղեն գինաց մա թագաւվուր:

Թագաւվուր էսաց. - Տ'էրթաս, ֆըլի ուսկուր բիրիս, թը բիրիր՝ բիրիր, թը չըբիրիր՝ զքու վըզ կը զարկիմ:

Պառվու տըղեն էլավ, ձեռքիր խաչից ծուց, լալելեն իրի տուն:

Մեր էսաց. - Վուրդը՛, ընչո՞ւ կը լաս:

- Մարե՛, - էսաց, - իս տ'ըլամ, պա չըլա՛մ: Թագաւվուր կըսը՝ անցկուն ֆըլի ուսկուր տը բիրիս, իս ձը խամար սարե'մ տամ շնիլ: Իս ի՞նչըխ տ'էրթամ, ֆըլի ուսկուր բիրիմ:

Էսաց. - Վուրդը՛, մը՛ վախենա, Աստված օղուրմած ը, որ դու կէրթաս, թագաւվուրըն կըսըս՝ խարըր խազար ուղտ կուզըմ, խընգ խազար բեռ աղ կուզըմ, խընգ խազար բեռ գընի կուզըմ, խընգ խարըր պալթաճի, խընգ խարըր էլ ուղտ բառնուղ, ամինն էլ վուզրը քիսայից տ'ըլնը, հուրըշ մարդու ընը, չըմ էրթա:

Տըղեն էլավ, գինաց մա թագաւվուր, անցկուն էսաց:

Թագաւվուր էսաց. - Վուզի՛ր, լսա՞ր, ինչ էսաց, կը պատրաստիս՝ պատրաստե՛, չըս պատրաստի, զքու վըզ կը զարկիմ:

Վուզիր էսաց. - Թագաւվո՛ւր ապրած, մեկ օր տաս ընձի մոհլեթ, մինչիվ իս պատրաստիմ:

Պատրաստուքին տիսավ, պառվու տըղեն էլավ, գինաց տուն:

Մեր էսաց. - Ի՞նչ էրըր, վուրդը՛:

Էսաց. - Մարե՛, ըսըցը, վուզիր պատրաստուքին տըսավ:

Խապար օրուխկիցըն պառվու տըղը իտիվ՝ թող գան, էրթա:

Մեր էսաց. - Վուրդը՛, քանռսուն ավուր ճամբախ ը, կէրթաս, սարը մեջ կուլ կա, ադա կուլու ջրիր կը խանեք դուս, գընին տեղ կը դարդըկեք, ադա աղն էլ կը տանեք, պարզեք քարիրու վերեն, կէրթեք, հեռուն տեղ կը նստըք, թամաշա կէնըք: Ֆըլիր կը գան, զաղ կուտըն, զգընին կը խմին, կը սարխոշնան, ադա խընգ խարըր պալթաճիք թ'ընկնին մեջքիր, բուլուր ջարդին, զուսկուրքիր բառնաք, բիրըք:

Պառվու տըղեն էլավ գինաց, վուզրին էսաց. - Քանռսուն օր տ'էրթամ, քանռսուն օր տը գամ: Կուզըմ անցկուն ուտիլ-խմիլ ըլնը, մինչիվ գանք, անուքը չըմնանք: Որ անուքը մնանք, մեկ խատ էլ ուսկուր չըմ բիրի:

Պառվու տըղեն զբեռնիր իբարծ, ուր մարդիր առըց, գինաց:

Քանռսուն օր ինչ թմավ, գինաց սարը մեջը:

Էսաց ուր մարդիրուն. - Կուզըմ՝ էսա կուլը ջրիր ամին խուրթը՛ք, թափի՛ք դուս:

Էլան, ադա ջրիր ամին խուրթըցըն, թափըցըն, աղն էլ տարան քարիրու վերեն պարզըցըն, գինացըն, զատը նստան, թամաշա էրըն:

Տիսան՝ ֆըլիր էկան, զաղ կիրան, ծարավցան, էկան վար ջրին, զգընին խման, բուլուր սարխոշցան, զիրար ջարդ ու բուրդ էրըն:

Պալթաճիքն էլ ընկան մեջքիր, սաղ մնացածն էլ բուլուր ջարդիցըն, ուսկուրքիր խանըն, զբեռնիր բըռնըցըն, բարցըն, ճամբախ ընկան, ինչ քանռսուն օր թմավ, էկըն Մըսրա քաղաք դուս էլան:

Տարավ, զբեռնիր թափից:

Թագաւորը տրսաւ, էսաց. - Վուզի՛ր, պառվու տրողրն մեկ աղեկ պախշի՛շ'մ տու:

Վուզիրն էլ էլաւ, մեկ կուռուշ էդի պառվու տրողը ձեռ:

Պառվու տրողեն էլաւ, գինաց տուն:

Պառաւ էսաց. - Վուրդը՛, էկրը, ֆըլի ուսկուրքիր բիրրը, թագաւորը քի պախշիշ'մ չէտո՞ւ:

- Մարե՛, թագաւորը էսաց՝ աղեկ պախշի՛շ'մ տու, վուզիր մեկ կուռուշ վիրուց, էդի իմ ձեռ:

էսաց. - Վուրդը՛, ան կուռուշն էլ թա՛լ մատ ան քսան փարրն, Աստված անհու պատիճըմ տա, չազատվը:

Տրողեն կուռուշն էլ իթալ մատ ան քսան փարրն:

Վուզիր էսաց. - Թագաւո՛ւր ապրած, ասա ֆըլի ուսկուրքիր ինչ բիրի, պետք ը Ուստա Մուրատ գա, սարեն շընի: Վարպետ Մուրատ չըլնը, մարդ չըկերի շընի:

Վարպետ Մուրատն էլ քառսուն տարը կա՝ մեռը:

- Վո՞ւվ տ'էրթա՝ վարպետ Մուրատ բիրը:

- Ո՛ր ֆըլի ուսկուրքիր բիրիր ի, ան տը բիրի Ուստա Մուրատ:

Մարդ խրկիցրն, պառվու տրողեն էկաւ թագաւորը մոտ:

էսաց. - Պառվո՛ւ տրողա, քինե կուզեմ՝ Ուստա Մուրատ զսարե'մ ըզի խամար շընը:

- Թագաւո՛ւր ապրած, Ուստա Մուրատ քառսուն տարը կա՝ մեռը:

- Բիրրը՝ բիրրը, չըբիրրը՝ զքհու վրզ կը զարկիմ:

Տրողեն մաղտեն էրաւ, էկաւ տուն:

- Վուրդը՛, - էսաց մեր, - ի՞նչ մաղտեն էրիր իս, ի՞նչ կա:

- Պա ի՞նչըխ մաղտեն չէնիմ, թագաւոր էսաց՝ տ'էրթաս, Ուստա Մուրատ բիրրս: Ուստա Մուրատ քառսուն տարը կա՝ մեռը, իս մեռուկ մարդ ի՞նչըխ գերեզմանեն տը խանիմ, բիրրմ:

Մեր էսաց. - Վուրդը՛, մը՛ վախենա, քհու Աստված կանչի՛, գինա՛: Կէրթաս թագաւորրն կըսրս՝ քառսուն անծին շուշակ վուզրը մոտեն կուզրս:

Տրողեն էկաւ մատ թագաւոր, ուզրց:

Թագաւորն էլ էսաց. - Վուզի՛ր, տը տաս՝ ինչ կուզը:

Քառսուն շուշակ առրց, գինաց գիրիզմանատնիր, ան տե քառսուն էլ մորթից, ան տե իփից, աղքատնիրուն կիրցրցուց, գինաց, հհուր չուքիր իզար Ուստա Մուրատը գիրիզմընը հառաջ,

ուր խնդիրք Աստուծուց էրավ, կանչից՝ Ուստա՛ Մուրատ, Ուստա՛ Մուրատ, վի՛ իլի:

Աստուծո խրամանով Ուստա Մուրատ իլավ, նստավ:

Էսաց. - Աղբե՛ր, ի՞նչ կուզըս զինե, քանռսուն տարը կա՝ մեռիր իմ, չը՛ք թուղնը իս խանգըստ մնամ:

Էսաց. - Ուստա՛ Մուրատ, կը խնդրիմ, թագանվուր ըզի խրկիր քու իտիվ, տը գանս, սարե՛մ թագանվուրը խամար շնիս, թը չըգանս, թագանվուր իմ վըզ տը զարկի:

Ձեռք՛մ շուր էլ Ուստա Մուրատը խամար տարը խիտ:

Ուստա Մուրատ շուրիր խագանվ, պառվու տըղեն խնդրաց էկըն թագանվուրը մոտ, Ուստա Մուրատ էսաց. - Թագանվո՛ւր ապրած մնա, քանռսուն տարը կա՝ իս մեռիր իմ, ի՞նչ կուզըս զինե:

Թագանվուր էսաց. - Իս կուզըմ ասա ֆըլի ուսկուրքիրուց սարե՛մ զի խամար շնիմ:

Էսաց. - Շա՛տ աղեկ, կը շնիմ, իմ կռան, կավ գդել աս տեղ չէ: Իս մեռիր իմ, մինչիվ ասօր իմ կռան, կավ գդել կու՛ մարդագել պառվու դռան փակ տան ի:

- է՛, վո՞ւվ տ'էրթա, բիրը:

Վուզիր էսաց. - Վո՛ւվ Ուստա Մուրատ բիրի, ան տ'էրթա բիրը, ինչ զմուրթ բիրըց:

Թագանվուր էսաց. - Պառվո՛ւ տըղա, կէրթաս բիրիս՝ բի՛, չըբիրիս, քու վըզ կը զարկիմ:

Պառվու տըղեն մաղտեն էրավ, գինաց տուն:

Մեր էսաց. - Ուստա Մուրատ բիրը՞ր:

- Ուստա Մուրատ բիրը, մըկա Ուստա Մուրատը կռան, կավ գդել կու՛ մարդագել պառվու դռան փակ տուն ի, կուզը: Իս ի՞նչըխ տ'էրթամ, բիրիմ:

Էսաց. - Վուրդը՛, Աստված ան վուզրըն պատիճըմ տա, ան հիտիվ քի կան կը գա՛, զքի կուրիսա: Վուրդը՛, մը՛ վախինա, քու Աստված կանչը՛, գինա՛: Կէրթաս, սար'մ կըլնը քու հառեջ, ադ սարը քանրիր արծըլը տըսակ ըն: Կէրթաս, ինչ խասնըս անտե, կըսըս՝ իս աշխարք կան էր իկի, զգնա անուշ սար չըր տըսի, ան կընցնիս, կէրթաս, սար'մ էլ կը գա՛ քու հառեջ, ադա սար ամին փուշ ի: Կըսըս՝ իս աս քան կան էր էկի, աս տըսակ կակուղ փուշ չէր տըսի: Անունք ճամբախ կը տան, կընցնիս, կէրթաս: Կէրթաս, գիտըմ կըյնը քու հառեջ, ան ջրու տըսակ աշխարքի վերեն պղտոր

ջուր չըկա, փշու՛մ ան ջրեն կը խմիս, կըսըս՝ իս աշխարք կան էր էկի, իս աս ջրու տըսակ անուշ, զուլալ, քաղցր ջուր չըր տըսի: Ջուրն էլ ճամբախ կը տա, կընցնիս: Կէրթաս, պառվը տունն էլ մանչ դաշտըն ի, դուռ քու բաղդ, թե պառավ քինած ի, կը բիրիս, թը չէ, զքի կուտը անպատճառ: Վուրդը՛, զքու Աստված կանչը՛, գինա՛, մը՛ վախենար:

Տըղեն էլ իլավ, գինաց թ'ավուրըմ ճամբախ, թը տաս ավուր, գինաց, սարըն մոտացավ, սարըն էսաց. - Իս անքան ախշարք կան էր էկի, զգնա անուշ սար չըր տըսի:

Սար ճամբախ իբաց, էսաց. - Էրի՛, գնա՛, ըցգնե՛մ տարը իս աս տեղն իմ, մարդ ձը զադա խապար չըր տըվը:

Սար ընցավ, գինաց, փըշըն մոտացավ, էսաց. - Իս ընզգնե՛մ ախշարք կան էր էկի, իս զգնա կանանչ, կակուղ փուշ վար ախշրքըն չըր տըսի:

Փուշ իրարուց բացվավ, տըղեն ընցավ, գինաց:

Գինաց, գիտուն մոտ խասավ, կզվավ վար գիտուն, փշուրըմ ջուր խմավ, էսաց. - Իս ընցգնե՛մ աշխարք կան էր էկի՝ զգնա անուշ, քաղցր, զուլալ ջուր չըր տըսի:

Գիտն էլ ճամբախ էտու, տըղեն ընցավ, գինաց:

Գինաց, պառվու տուն մատացավ, տիսավ՝ պառավ քնած ի, ձեռ իտու, զկռան, կավ գդել առըց, հիտ դարձավ:

Քիչ'մ հեռըցավ, պառավ ակախավ, տիսավ կռան, կավ գդել առըց, կէրթա:

Էլավ, ընկաւվ հիտիվեն, էսաց. - Դուռ տը պըրծնըս իմ ձեռնեն, մինչիվ գիտուն բիրան կէրթաս, գիտ ի՛նչըխ տ'ընցնիս:

Գիտն էլ, փուշն էլ, սարն էլ սիհըրի էր:

Տըղեն ինչ էկավ գիտու բիրան, պառավ կանչից. - Գի՛տ, թուղ մը՛ տա էրթա, մինչիվ իս խասնիմ:

Գիտը կանչից. - Չէ՛, ընցգնե՛մ տարը կա՝ իս աս տեղն իմ, մարդ ձը չըր ըսի՝ անուշ, զուլալ ջուր, աս տըղեն ինչ իրի, էսաց:

Գիտ ճամբախ իբաց, տըղեն ընցավ:

Իրի, փըշըն մատացավ, պառավ կանչից. - Փո՛ւշ, բըռնի՛, մինչիվ իս խասնըմ:

Փուշ էսաց. - Չըմ բըռնը, ընցգնե՛մ տարը կա՝ իս էս տեղն էր, մարդ ձը չըր ըսեր՝ կակուղ, կանանչ փուշ: Աս տըղեն ինչ էրի, էսաց:

Փուշ ճամբախ իբաց, տըղեն ընցավ:

Պառավ կանչից. - Գիտ ընցար, փուշն էլ ընցար, վ'արծլեստաննուն ի՞նչըխ տ'ընցնիս:

Իրի, սարըն մատացավ, պառավ կանչից. - Սա՛ր, մը՛ թուղնը մինչիվ իս գաՀ, խասնըմ:

Սար կանչից. - Ինչո՞ւ խամար չըթուղնըմ, ընցգնե՛մ տարը կա՝ իս աս տեղն էր, մարդ ըզի չէր ըսի՝ զգնա անուշ սար չըկա: Աս տըղեն ինչ իրի աստե, էսաց:

Սար ճամբախ իբաց, էսաց. - Էրի՛, ընցի՛:

Տըղեն ի՛նչ զսար ընցավ, պառավ կըսկըծու բըդգՀավ:

Տըղեն զկռան, կավ գդել իբի, իտու Ուստա Մուրատ:

Ուստա Մուրատն էլ բաշլից, սարեն շնից, պըրծավ:

Ուստա Մուրատ պառվու տըղըն էսաց. - Խնդրիմ քինե, ինչըխ ըզի բիրիր, անցկուն էլ ըզի տանըս իմ տեղ:

Պառվու տըղեն իլավ, Ուստա Մուրատ առըց, գինաց գերեզմանանոցն, չուքիր իզար հեռջիվ գերեզմնին, խնդիրք Աստուծուց էրավ, էսաց. - Աստվա՛ծ, քինե կուզըմ Ուստա Մուրատ էլմ ուր գերեզմանն մտնի:

Գերեզման բացվավ, Ուստա Մուրատ մտավ ուր տեղ:

Պառվու տըղեն էլավ, էրի հՀուր տուն:

Վուզիր էսաց. - ԹագՀավո՛ւր ապրած կՀաս, սարեն շնիցըր, մուրթ թըլցիր ի սարեն, լուս կը տա, դՀ՛ւ մնակ կը նըստըս ինի: Նշանակութին չունը, պետք ը խրկիս, Պապը Ֆրենկի ախչըկ բիրիս, էրկուս իրարու առնըք, խատ իրարու նստեք:

ԹագՀավուր էսաց. - Շատ աղե՛ն կըսըս, վո՞ւվ տ'էրթա Պապը Ֆրենկի ախչըկ տը բիրի, կըռվով չըբիրվը, խաթրուվ չէրթա:

Վուզիր էսաց. - Էս սարեն վո՞ւվ իտու շնիլ, էսքան զատ վո՞ւվ իբի, էլմ էն մարդ կը բիրը:

Էսաց. - Խրկի՛, պառվու տըղըն բի՛ աս տե:

Մարդ գինաց, էսաց. - ԹագՀավուր քի կը կանչի:

Մեր էսաց. - Վուրդը՛, իլի՛, գինա՛, Աստված ան վուզրըն պալեն տա: Ան քի իտիվեն կան կը գՀա, վուրդը՛, մը՛ վախինա:

Պառվու տըղեն կՀուգՀա թագՀավուրըն մոտ:

Էսաց. - ԹագՀավո՛ւր ապրած, ի՞նչ կա:

Էսաց. - Քինե կուզըմ՝ էրթաս Պապը Ֆրենկը ախչըկ բիրիս: Բիրիս՝ բի՛, չըբիրիս՝ վըզըդ կը զարկիմ:

Տըղեն մաղտեն էրավ, գինաց տուն:

Մերն էսաց. - Վուրդը՛, էլմ ի՞նչ մաղտեն էրիր իս:

Տըղեն էսաց. - Ըզի կը ճամբխը, կասը՝ Պապը Ֆրենկի ախչըկ ձը խամար բի, չըբիրիս՝ վըզըդ կը զարկիմ:

Էսաց. - Վուրդը՛, Աստված ան վուզրըն պատիճըմ տա, կըլնըս, կէրթաս թագաւուրը մոտ, կըսըս՝ թագաւո՛ւր ապրած, կուզըմ քինե խընգ խարըր ախչըկ՝ ամեն մեկ տըսակ, մեկ թայ: Անուանց խամլ մեկ տըսակ, քինե կուզըմ մեկ կանմի՛մ, ան կանմին էլ ամին ակնունք տ՛ըլնը, ախշըրքի մեջ ալ ան տըսակ կանմի տը չըլնը, քառսուն ձեռք սազ տ՛ըլնը, քառսուն ձեռք էլ դահուլ-զուռնա տ՛ըլնը, հիսուն խատ էլ չանկի տ՛ըլնը, մեկ ամսվան ալ խընգ խարըր մարդու ուտելիս, ինչ ուտելիս կա մանչ ախշըրքին, ամեն վուզրի քիսայից տ՛ըլնը:

Թագաւուր էսաց. - Վուզի՛ր, լսա՞ր:

- Թագաւո՛ւր ապրած, - էսաց, - խնդրիմ, քսան օր ժամանակ տաս, մինչիվ կանմի՛մ տամ շնիլ, ախչընիրն էլ տիսնամ, բիրիմ:

Կանմի՛մ իտու շնիլ, ախչընիրն էլ ժողվից, իբի:

Վուզիր անցկուն իրավ, անցկուն չարչարանք քեշից, զուր շապըկն էլ ծախըց, հալա ախչըկ մնաց պակաս, ուր ախչըկն էլ իբի տեղ: Անցկուն շվարավ վուզիր, օր ավուր խացըն կարոտ մնաց:

Պառվու տըղեն էլ իլավ, զուր ախչկըտիր առըց, գինաց, մտավ կանմին: Կանմին էլ անցկուն կանմի մ՛էր, ախշըրքի վերեն ան տըսակ կանմի չըկեր:

Պառվու տըղեն էր կանմին իթուդ, գինաց..... քաղքը դիմաց դադրավ:

Էդ.... քաղքը մախլուխ թափան թամաշա, ասըցըն մեմեկը. - Սա տըսակ կանմի մինք չըք տըսի:

Թագաւուր Պապը Ֆրենկին էսաց վուզրին. - Իլի՛, նստընք կայիդ, էրթանք կանմու թամաշեն, տըսնանք ի՞նչ մարդ ի, ի՞նչ մարդու կանմի ի:

Թագաւուր, վուզիր նստան կայիդ, էկան, կանմին դուս իլան:

Վուզիր, թագաւուր ինչ մտան նիրս, շաշմիշ իլան, յոթ օր, յոթ գըշիր մնացիր ան տե, իրենց մտով մեկ սահաթ իլավ էկածն:

Թագաւոր վուզրին էսաց. - Աս սահաթըմ կա մինք էկեր ինք, էրթանք:

Կամուց իլան, նստան կայիղ, դուս իլան:

Թագաւոր գինաց սարեն, կընըկ էսաց. - Աստված քու տուն ավըրը՛, աս յոթ օր կա՝ դու քաղաք թուղիր եք անթագաւոր, անվուզիր:

Թագաւոր էսաց. - Մի մտքեն սահաթ մ'իլավ, գինացիր ընք:

Կընըկ էսաց. - Յոթ օր կա՝ դու գացըր ընք:

Թագաւոր էսաց. - Կընը՛ն, միք գացընք յոթ օր, էկինք: Վախինամ՝ դու էրթաս, ամիս'մ մնաս, տը չըգաս:

Կընըկ էսաց. - Ասօր իս տ'էրթամ:

Կընընկն էլ էլավ, զուր խալավքիր խաքաւ, զուր խուտամ առըց, գինաց նստավ կայեղ, քեշից գինաց, կամու հեռջիվ կայնավ:

Թագաւորը կընընկ կայիղից դուս իլավ, մտավ կամին, էսաց. - Խուտա՛մ, ինչ մորեն իլեր եք, ադ ընցկնա սեյր չընք տըսի:

Թագաւորը կընընկ մնաց տասնըխընգ օր կամու մեջ:

Էսաց. - Խուտա՛մ, ասօր էրթանք, վաղ էլմ կու գանք:

Կամուց իլան, նստան կայիղ, կայեղչին քեշից, դուս իբի, էխան:

Թագաւորը կընընկ գինաց սարեն:

Թագաւոր էսաց. - Միք յոթ օր մնացընք, կըսըս՝ շատ իք մնացիր, պա դու տասնըխընգ օր մնացիր:

Էսաց. - Ասա տըսակ սեյր ախշըրքի վերեն էլ չըլնը:

Թագաւորը ախչըկ էսաց. - Դու էրկուս կէրթե՛ք, վալա՛, իսն էլ տ'էրթամ:

Թագաւորը ախչըկ զուր խալավքիր խաքաւ, իրի նստավ կայիղ, քեշից, գինաց, կայեղից դուս իլավ, մտավ կամին:

Պառվու տըղեն էլ կամուչուն էսաց. - Քինե կուզըմ՝ տամուր առնիս[34]:

Զտամուր առըց, զկամու պար իտու, կամին էլավ, իրի Մըսըր:

Ադ թագաւորը ախչըկն էլ տիսավ՝ խոր քաղքեն հեռըցավ:

---

[34] Խարիսխը վեր քաշես (Ծ.Բ.):

- Ամա՜ն-զամա՜ն, կամին գինաց, իս ի՞նչ ինիմ, - պոռաց:

Պառվու տըղեն Պապը Ֆրենկի ախչըկ առըց, իբի, Մըսրա քաղաք դուս էխան, առըց, տարավ թագավուրը սարեն:

Ախչըկ զսարեն տըսավ, շաշմիշ էլավ, էսաց. - Էսա ֆըլի ուսկուրքիր վո՞ւվ բիրիր ի, ասոր ուստեն վո՞ւվ բիրիր ի, էսա մուրթ վո՞ւվ բիրիր ի:

Էսաց. - Անա մարդն ի բիրիր, ինչ զքի բիրիր ի:

- Աճեպ ի՞նչ իք տըվը անուս, օր բիրիր ի:

- Վուզիրն ը տըվը, իս չըմ տըվը, իս չըմ գիտը:

Ախչըկ տըղըն էսաց. - Ի՞նչ ի տված քի:

Էսաց. - Մուրթ բիրիր իմ, վուզիր ըզի տվը քսան փարա, ֆըլի ուսկուրքիր բիրիր իմ, տըվը մեկ կուռուշ, Ուստա Մուրատ բիրիր իմ, տըվը վաթսուն փարա:

Պառվու տըղեն թուղ իտու, գինաց:

Վուզիր էսաց. - Թագավո՛ւր ապրած, ֆըլի ուսկուր բիրիր, սարեն տվըր շընիլ, զՊապը Ֆրենկի ախչըկ բիրիր, պետք ը խրկիս, անմախութենի ջուր կա, բիրիս, լողանաս, ըլնըս տասնըչուրս տարեկան, առնըս Պապը Ֆրենկի ախչըկ:

- Վուզի՛ր ,- էսաց, - անմախութենի ջուր վո՞ւվ կէրթա, բիրը:

Էսաց. - Վուվ էս կանդար բանիր իբի, էլըմ ան կը բիրի:

Թագավուր պառվու տըղեն կանչից, իբի:

Տըղեն էսաց. - Թագավո՛ւր ապրած, ի՞նչ կուզըս ըզնե:

Էսաց. - Քինե կուզըմ, կէրթաս, անմախական ջուր կը բիրիս, իս լուղանամ՝ ըլնըմ տասնըխընգ տարեկան ճըհել, Պապը Ֆրենկու ախչկա խիտ պսակվըմ:

Պառվու տըղեն դարձավ, գինաց տուն:

Մեր էսաց. - Թագավուր էլ ի՞նչ էսաց:

- Թագավուր էսաց՝ կէրթաս անմախութենի ջուր բիրիս....

Էսաց. - Վուրդը՛, կէրթաս, յոթ օր ճամբախ խառնուրդ կա, մեկ էխտիյար մարդ՝մ ան տե նստը, վո՜ւվ էրթա, ճամբախ նշանց կը տա, կէրթաս ան մարդ:

Ան ինչ տ՝էրթար, տըղըն կանչից թագավուրը ախչըկ:

Պառվու տըղեն էլավ, գինաց Պապը Ֆրենկու ախչկան մոտ, էսաց. - Իս տ՝էրթամ, ի՞նչ կըսըս, ըսա՛:

Պապը Ֆրենկը ախչըկ էսաց. - Կէրթաս, չըմ հավատա՝ դէու անմախական ջէուր բիրըս, թե բիրը՞ր, իմ ձեռ տաս, հէուրըշ ձեռ չըտաս:

Պառվու տըղեն էլ էլավ, գաստ էրավ, գինաց, խասավ յոթ ճամբախ խառնուրդ, էխտիյար տիսավ, էսաց. - Էխտիյա՛ր, ճամբախ ըզի նշա՛նց տու, իս տ'էրթամ, անմախական ջէուր տը բիրիմ:

Էսաց. - Հա՜յ, վուրդը՛, իս չըմ խավատա՝ դէու անմախական ջէուր բիրիս: Կէրթաս ասա ճամբխով՝ տաս ավուր ճամբախ: Առավուտուն ինչ ցուրտ ժամանակ կը տիսնաս քէու ճամբխը մեջ՝ թե ճանավար ըլնը, թե խավք ըլնը, կառնըս, կը դընըս քէու ծուց, կը տաքնա, մինչիվ արիվ կառնը, կը թուղնըս: Թ'անմախական ջէուր բիրը, ան տը բիրը, հէուրըշ մարդ չըկերի բիրը:

Տըղեն էլավ, ճամբախ ընկնավ, խընգ-տաս ավուր ճամբախ գինաց, տըսավ՝ խավքըմ պառկիր ի ան տե, քիչ մնացի, օ ցրտու սառը:

Տըղեն զխավք բըռնից, իդի ծուց, քեշից գինաց, մինչիվ արիվ առըց, խավք ծուց տաքցավ:

Զխավք իթուղ, թըռավ, գինաց:

Տըղեն էլ գինաց, գինաց, սարը գլէխ կայնավ:

Տըսավ՝ խուրըմ կա ան տե, խազար արշուն խուրունդի. անմախական ջէուրը ան խուրն ը, մարդ չըկերի իջնե մեջ, բան վիրուց չըխասնը տակ:

Նստավ ան տե, մտածից. «Աստվա՛ծ, իս ի՞նըչխ անա խուրեն ջէուր խանըմ, տանըմ»:

Մեկն էլ տիսավ՝ բան վիրուց գինաց խուրը տակ, մեկն էլ տիսավ՝ խավքըմ խուրուց դէուս իլավ՝ փարխաճ ջէուր վըզըն: Տիսավ ան խավք, ինչ դըրիր ի ծուց:

Տըղեն զջէուր առըց, խավք թռավ, գինաց:

Տըղեն ճամբախ բըռնից, գինաց, Մըսրա քաղաք դէուս էլավ, ջէուր իտու Պապը Ֆրենկը ախչըկ, դարձավ:

Պապը Ֆրենկը ախչըկ պըղընձըմ ջէուր եռցըցիր, դրիր ան տե, գինաց թագաւվուրը էսաց. - Պառվու տըղեն անմախական ջէուր բիրը, իլի՛, լուղկանանք, կարգվինք: Իլի՛, մըտը՛ աս պըղընձ:

Թագաւվուր էկավ, շէուրիր էխան, ընկնավ պըղընձ, խաշավ:

Թագաւվուր տարընն, պախըցընն:

Անմախական ջուր բիրը ան տե, պառվու տըղեն, Պապը Ֆրենկու ախչըկ լուղացան, էրկուսն էլ իլան տասնըխընգ տարեկան, պսակվան:

Քաղքը մեջ խուսք իլավ՝ թագաւվուր, Պապը Ֆրենկու ախչըկ անմախական ջուր խմած, իլած տասնըխընգ տարեկան:

Պառվու տըղեն որ իլավ թագաւվուր, խրկից, զուր մերն էլ իբի, յոթ օր, յոթ գըշիր զուր խարսնըս իդի, պսակվան, էլավ Մըսրա թագաւվուր:

Անուանք ան տե խասան ուրինց մըրազ, դու էլ աս տե խասնիք ձի մըրազըն: